Հավելված N 11
ՀՀ փոխվարչապետի
N 577-Ն որոշման

«ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐԳԻ ՓՐԿԱՐԱՐ» ԿՐԾՔԱՆՇԱՆԻ ՏԵՍԱԿԸ, ՁԵՎԸ ԵՎ ՇՆՈՐՀՄԱՆ ԿԱՐԳԸ

1. «Միջազգային կարգի փրկարար» կրծքանշանը (ձևը կցվում է) շնորհվում է «Միջազգային կարգի փրկարար» փրկարարի որակավորման դաս ունեցող փրկարարական ծառայողներին:

2. «Միջազգային կարգի փրկարար» կրծքանշանը շնորհում է Նախարարը:

3. «Միջազգային կարգի փրկարար» կրծքանշան ստացող փրկարարական ծառայողը պարտավոր է վերադարձնել փրկարարի որակավորման դասին համապատասխան իրեն նախկինում շնորհված կրծքանշանը:

4. «Միջազգային կարգի փրկարար» կրծքանշանն իրենից ներկայացնում է օվալաձև՝ ուռուցիկ մակերեսով շրջանակ, ընդհանուր ֆոնը՝ սպիտակ: Կրծքանշանի երկարությունը 60 մմ է, իսկ միջնամասի լայնությունը՝ 45 մմ: Կրծքանշանի վերին հատվածի կենտրոնում պատկերված է Հայաստանի Հանրապետության զինանշանը, իսկ ներքևի հատվածում՝ կենտրոնում, պատկերված է Հայաստանի Հանրապետության դրոշը: Կրծքանշանը եզրագծված է 10 մմ լայնությամբ ոսկեգույն դափնեպսակով: Կրծքանշանի միջնամասում՝ ամբողջ լայնությամբ (ձախից աջ) պատկերված է Հայաստանի Հանրապետության ծածանվող դրոշը: Կրծքանշանի կենտրոնում՝ դրոշի վրա, 30 մմ տրամագծով կապույտ ֆոնի վրա պատկերված է շրջանակ: Շրջանակի եզրագծով՝ վերևի հատվածում, գրված են «ARMENIA», ներքևի հատվածում՝ «RESCUER OF INTERNATIONAL CLASS» բառերը: Շրջանակի կենտրոնում գտնվող 20 մմ տրամագիծ ունեցող երկրագունդը խորհրդանշող կապույտ շրջանակում զետեղված է արծիվ և ութաթև աստղ: Կրծքանշանի վրա չի թույլատրվում պատկերների և գրվածքների աղավաղում:

5. «Միջազգային կարգի փրկարար» կրծքանշանը հակառակ կողմի կենտրոնական մասում ունի պտուտակային ամրակ՝ հագուստի ամրացնելու համար, որի

տակ առկա է կրծքանշանի հերթական համարը: Ամրակը բաղկացած է 2 մասից՝ հեղույսից՝ Մ2.5 X 8 մմ չափսերով և պտուտակից՝ 20 մմ տրամագծով:

6. «Միջազգային կարգի փրկարար» կրծքանշանի տուփի արտաքին չափերը՝ (բարձրություն X լայնություն X երկարություն) 35X90X90 մմ: Տուփը՝ ուղղանկյուն, արտաքինից ծածկված սև արհեստական կաշվով, ներսի կողմից ունի կրծքանշանի արտաքին եզրագծին համապատասխան սպիտակ հարթակ՝ իր ճշգրիտ դիրքավորման համար: Տուփը բացվում է զսպանակային հատուկ ծխնիների միջոցով՝ դիմացի կողմից դեպի վերև: Ծխնիները և տուփի կափարիչը ներսից պատված են սպիտակ թավշյա գործվածքով: Կափարիչը ներսի կողմից միջադրված է սպունգանման նյութով:

7. «Միջազգային կարգի փրկարար» կրծքանշանի հետ տրվում է վկայական:

Ձև

«Միջազգային կարգի փրկարար» կրծքանշան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

01.09.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ